**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/63-Հ3**
**09.10.2024Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/63 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «09» «06» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Համիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նորիկ Բունիաթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2024թ հոկտեմբերի 9-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/63 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. թիվ 1910-Ն որոշումը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել 2026 թվականի համար պայմանագրով մատուցման ենթակա ծառայությունների, ներառյալ 17.03.2025թ. կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/63-Հ2 համաձայնագրով նախատեսված, սակայն 9117096 (ինը միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար իննսունվեց) ՀՀ դրամի չափով չմատուցված ծառայությունների դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

**3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

| **Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ** | **Կ Ա Տ Ա Ր Ո Ղ** |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2<br>ՀՎՀՀ 02698732<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ՝ 900011042315 | «Սեյսմշին» ՍՊԸ<br>Հասցեն՝ ք. Երևան, Գարեգին Նժդեհ 46<br>Հեռ.՝ (+374) 11-778-787, 44-77-87-87<br>Էլ. Փոստ՝ info@seismshin.am<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>Հ/Հ 220013336684000<br>ՀՎՀՀ 04227903 |
| **Գլխավոր քարտուղար՝**<br>------------------------------ **Հ. Հակոբյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | **Տնօրեն՝**<br>------------------------------ **Ն. Բունիաթյան**<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված թիվ 1
«09» «06» 2026թ. կնքված
N ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/63-Հ3 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չափաբաժին | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ. ՀՀ պետական բյուջեից, ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | **71351540/20** | **Տեխնիկական հսկողության ծառայություններ** (Հայոց ցեղասպանության հուշահամալիրի և թանգարանի հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ) | 0 | 0 | 0 | 0 | 7653400 | 7653400 | 11480200 | 11480200 | 11480200 | 11699147 | 11699147 | 11699147 | **11699147** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

______________ **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

______________ **Ն. Բունիաթյան**
(ստորագրություն)

Կ.Տ